կացուցանել զոք խնամակալ 'ի վերայ Պատրիարքին և փոխանորդի և արանց նորա · և յաղագս դիւրութեան և օգտի ամենայն եկեղեցականաց, և խնամելոյ զազգն, որք ընդ իշխանութեամբ Օսմանցւոց՝ յառաջագոյն Արքունի հրովարտակաւ կարգեցաւ խնամակալ Եղիազար Կաթուղիկոս եւ տուաւ նմա գիր 'ի դատարանէ և հրովարտակ յԱրքունուստ · և գարձեալ էլ հրաման սակս ձրի բաժանելոյ զՄիւռոնն · և այժմ ըստ զօրութեանց այնց հրովարտակաց, Եղիազար ամենայն եկեղեցականօք իւրովք, երթեալ նստցի յԵրուսաղէմ 'ի վանս Ս · Յակոբայ, վարել զիշխանութիւն Կաթուղիկոսութեան եւ Պատրիարքութեան իւրոյ, օրհնել զՄիւռոնն · զի մի' երբէք հակառակեսցին Պատրիարքունք Կոստանդինուպօլսոյ, և Երուսաղէմ՝ և փոխանորդք նոցին, և որոց ընդ նմա, և մի ոք յեպիսկոպոսաց իշխեսցէ երթալ անդր, եթէ ունիցի հրովարտակ 'ի ձեռին եւ եթէ ոչ, տուաւ հրովարտակ ըստ խնդրանաց նոցա · գրեալ 'ի \ Շէվվալ ամսոյ, \ • ՎՂ (1666) ։

---

## Գ Լ Ո Ւ Խ Թ .

Խնդիր պատարագելոյ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի ։ Մեկնել Եղիազարու Յերուսաղէմ ։ Յակոբ Կաթուղիկոս ։ Օրհնութիւն Միւռոնի Յերուսաղէմ ։ Բազոք Եղիազարու և Ժողովդոց ։ Մեկնաս Վրացի ։ Բաժինք Հայոց 'ի տաճարին Ս ։ Յարութեան ։ Դաւիթ Բերլացի ։ Գժտութիւն Մարտիրոսի ընդ Եղիազարու ։ Մահ Առաւուծատուր պատրիարքի ։

Ի ԲԱԶՈՒՄ ժամանակաց հետէ խափանեալ էր խորհուրդ Պատարագին Հայոց 'ի Գերեզմանէն Քրիստոսի, մանաւանդ Լատին կղերք բազմօք ընդդիմացեալ այսմ բացէ 'ի բաց մերժէին զՀայս, և ծանր թուէր նոցա մտանել 'ի Գերեզմանն ։ Իսկ Եղիազար թէպէտ եւ բազմօք ջանայր քաղցրացուցանել զմիտս և բառնալ զընդդիմութիւնն նոցա, այլ ոչ անսային նոքա, և բանք Եղիազարու ոչ եդիր տեղի 'ի լսելի ։ նոցա, վասն որոյ հարկ եղեւ բողոք բառնալ 'ի Դուռն · որ և գրեաց զիր աղաչանաց առ Եպար-